

Հ. Կ. ՓԱՆՈՍՅԱՆ, Ռ. Ե. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ե. Ս. ԹԱՌՅԱՆ

## ՏԱՐԲԵՐ ՀՈՂԱՏԻՊԵՐԻ ՏԱՐՐԱԿԱՆ ԱԶՈՏԻ ԱՍԻՄԻԼԱՑՄԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հողի մեջ կուտակվող օրգանական նյութերի քայքայման և առհասարակ նյութերի շրջանառության գործում ազդեցություն ունեցող միացությունների ձևափոխություններն արտակարգ կարևոր նշանակություն ունեն։ Հետևապես, հողի մեջ գտնվող ազոտային նյութերի քանակը և որակը հողի բիոլոգիական պրոցեսների ինտենսիվության վրա մեծ ազդեցություն են գործում։

Բազմաթիվ փորձերն ու գիտողությունները ցույց են տվել, որ հողի մեջ գտնվող թեև բարդ և թեև պարզ ազոտային միացությունները հողում բնակվող բազմազան միկրոօրգանիզմների կողմից արտակարգ արագությամբ ձևափոխվում են։ Միկրոօրգանիզմներն իրենց կենսադործունեության ընթացքում հողի ազոտային նյութերը ձևափոխելով՝ առաջացնում են ինչպես բարդ, այնպես էլ պարզ ազոտային միացություններ։ Վերջիններս բույսերի սննդառության համար կարևոր նշանակություն ունեն։ Հողի ազոտային նյութերի ձևափոխման բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ ազոտային բարդ օրգանական միացությունների հանքայնացման պրոցեսում առաջացած ազոտային հանքային միացություններն անմիջապես կամ օդազործվում են բույսերի ու միկրոբների կողմից կամ լվացվելու միջոցով անցնում են հողի ստորին շերտերը։ Դրա հետևիվանքով էլ հանքային ազոտային միացությունները հողի մեջ միշտ սահմանափակ քանակությամբ են գտնվում։ Դրանով էլ մասամբ բացատրվում է բույսերի աճման ընթացքում ազոտային նյութերի պակասի հետևանքով բերքատվության ցածր աստիճանը։ Այդ է պատճառը, որ մշակվող գյուղատնտեսական կուլտուրաների ազոտային սննդանյութերի պակասը լրացնելու համար հաճախ հանքային ազոտային պարարտանյութեր են մտցնում հողի մեջ։

Հողի մեջ ազոտային միացությունների պաշարն ավելացնելու գործում առանձնապես կարևոր նշանակություն են ստա-

նում այն միկրոբիոլոգիական պրոցեսները, որոնց շնորհիվ օդի տարրական գազային ազոտը հատուկ միկրոորգանիզմների կենսադործունեության ժամանակ օրգանական ազոտային միացությունների է վերածվում: Նման միկրոբիոլոգիական պրոցեսների շնորհիվ ապահովվում է ազոտի նորմալ շրջանառությունը բնույթյան մեջ. հետևապես, գազային ազոտը ձևափոխող միկրոորգանիզմներն իրենց կենսադործունեությամբ մեծապես նպաստում են բույսերի աճմանն ու զարգացմանը, այսինքն՝ նրանց բերքատվության բարձրացմանը: Իզուր չէ, որ այդ միկրոորգանիզմները դեռ շատ վաղուց արժանացել են գիտնականների և գյուղատնտեսների ուշադրությանը: Գիտնականներն այդ միկրոորգանիզմների, այսպես կոչվող, ազոտ կապող բակտերիաների մորֆոֆիզիոլոգիական առանձնահատկությունների վերաբերյալ կատարել են բազմապիսի գիտահետազոտական աշխատանքներ Սակայն պետք է նշել, որ այն հարցը, թե ազոտոբակտերիների տարրական ազոտը յուրացնելու ունակությունն ինչպես է արտահայտվում տարբեր քանակի ու որակի ազոտային նյութեր պարունակող տարբեր տիպի հողերում, համարյա պարզված չէ, իսկ այդ հարցի պարզաբանումը հողն ազոտային նյութերով պարարտացնելու գործի կազմակերպման համար կարևոր նշանակութուն ունի: Նկատի ունենալով այդ հանգամանքը, Ջանգեզուրի հողերի բիոլոգիական առանձնահատկություններն ուսումնասիրելու ընթացքում մենք հատուկ հետազոտության ենթարկեցինք տարբեր հողատեսակների տարրական ազոտի ասիմիլացման ունակությունը:

Առանձին հողատիպերի տարրական ազոտի ասիմիլացման ունակության բացահայտումը խիստ կարևոր նշանակութուն կարող է ունենալ բնության մեջ ազոտի շրջանառությունը ձիշտ բնույթի և ընդհանուր բիոլոգիական հարցերում կողմնորոշվելու համար:

«Ջանգեզուրի հողերի ազոտային ֆոնդի ընդլայնումը» հոդվածում (տես սույն ժողովածուի էջ 155) մենք նշել ենք, որ իրարից խիստ տարբեր ֆիզիկոքիմիական կառուցվածք ունեցող առանձին հողային տիպեր բնորոշ են նաև տարբեր քանակի ու որակի ազոտային միացությունների պարունակությամբ: Իսկ առանձին հողատիպերի մեջ գտնվող ազոտային նյութերի քանակական ու որակական խայտարեհատկութունը մեծ մասամբ կախված է աշխարհագրական դիրքից, հետևապես՝ կլիմայական պայմաններից և բուսական ծածկոցի առանձնահատկություններից:

Ջանգեղուրի հողային առանձին տիպերի ազոտային միացությունների որակական և քանակական առանձնահատկություններն անմիջականորեն անդրադառնում են հողի տարրական ազոտի ասիմիլացման ունակություն և ազոտորակտերների քանակի վրա:

Այդ ուղղությունը վերջին տարիներին ընթացքում մեր կատարած գիտահետազոտական աշխատանքների ավյալներից պարզվում է, որ Ջանգեղուրի այն հողային տիպերի ազոտի ասիմիլացման ունակությունն է բարձր և ազոտորակտերներն են շատ, որոնք ընդհանրապես յուրացվող ազոտային միացություններով աղքատ են, իսկ, ընդհակառակը, ազոտային նյութերով հարուստ հողերում գաղային ազոտի յուրացումը կամ շատ դանդաղ է ընթանում, կամ բոլորովին տեղի չի ունենում:

Այդ ուղղությունը մեր հետազոտություններից ստացված թվական ավյալներն ամփոփված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1-ում բերված թվական ավյալներից դժվար չէ եզրակացնել, որ Ջանգեղուրի տարբեր հոդատիպերի տարրական ազոտի ասիմիլացման ունակությունը խիստ տարբեր է: Այսպես, օրինակ՝ թույլ հզորությունը, կալային մասով աղքատ, խճուղ, ինչպես նաև կավային մասով համեմատաբար հարուստ գորշ հողերում, որոնք զբաղված են կիսաանապատային բուսականությունը ու հացահատիկային կուլտուրաներով, հողի մեջ 1 գ մաննիտ մըացընելու գեպքում կապվում է 24—28 մգ տարրական ազոտ, մինչդեռ սեահողերում, նույնիսկ հացահատիկներ մշակելու գեպքում, 1 գ մաննիտի քայքայումից հաղիվ կապվում է 1—2 մգ ազոտ: Ազոտի ասիմիլացումը բոլորովին տեղի չի ունենում մարգագետնային ալպյան բուսականությունը ծածկված լեռնա-մարգագետնային հողերում: Տարրական ազոտի ասիմիլացման պրոցեսի վրա, անկասկած, վճռական ազդեցություն է գործում հողի ազոտային նյութերի քանակը: Ինչպես տեսնում ենք աղյուսակ 1-ում բերված թվական ավյալներից, ազոտի ասիմիլացում չի կատարվում կամ շատ թույլ է ընթանում այն հողերում, որոնց մեջ թե հումուսի և թե այլ ազոտային նյութերի քանակը մեծ է: Իսկ, ընդհակառակը, ազոտային նյութերով աղքատ հողերում ազոտի ասիմիլացումն ինտենսիվ է ընթանում: Այսպես, եթե 0,5—3% հումուս և 100 գ հողում 0,13—0,32 մգ նիտրատային ազոտ պարունակող հողի մեջ 1 գ մաննիտի քայքայումից 10—28 մգ տարրական ազոտ է կապվում, ապա 5—12% հումուս և 100 գ հողում 0,6—1 մգ նիտրատային ազոտ պարունակող լեռնա-մարգագետ-

նային հողերում, ինչպես ասացինք, տարրական ազոտի ասիմիլացումը կամ շատ թույլ է ընթանում, կամ բոլորովին տեղի չի ունենում:

Առանձին հողատիպերի տարրական ազոտի ասիմիլացման վրա, ինչպես երևում է աղյուսակում բերված տվյալներից, բարերար ազդեցություն է գործում հողի մշակումը: Օրինակ՝ կիսաանապատային հողը քանի դեռ չի մշակվում և զրազված է կիսաանապատային բուսականությունով, եթե նրա մեջ 1 գ մասնիկի քայքայումից կապվում է 10,36 մգ տարրական ազոտ, ապա այդ նույն հողերի կուլտուրական տարատեսակներում գյուղատնտեսական բույսեր մշակելուց հետո նրանց մեջ 1 գ մասնիկի քայքայումից արդեն կապվում է 17, 50 մգ տարրական ազոտ:

Առանձին հողատեսակների ազոտի ասիմիլացման ունակության վերը նշված օրինաչափություններն անդրադառնում են նաև ազոտորակտերների քանակի վրա: Այսպես, օրինակ՝ ազոտորակտերներով հարուստ են այն հողատեսակները, որոնցում տարրական ազոտի ասիմիլացումն ինտենսիվ է ընթանում: Այս ուղղությամբ ձեռնարկված ուսումնասիրություններից ստացված թվական տվյալներն ամփոփված են աղյուսակ 2-ում:

Ինչպես երևում է աղյուսակ 2-ում բերված թվական տվյալներից, ազոտորակտերներով և լորձնային բակտերիաներով ընդհանրապես հարուստ են կիսաանապատային, խճոտ, ավազակավային գորշ հողերը: Այսպես, օրինակ՝ եթե այդ հողի 100 մգ մասնիկները ցանվում են Պետրիի թասերի մեջ լցված՝ Ջայելի առաջարկած սննդանյութի վրա, ապա ամեն մի մասնիկի վրա առաջանում են *Azotobacter chroococcum*-ի բնորոշ գազութներ, իսկ *Bact. radiobacter*-ների քանակն էլ նույն հողերում հասնում է 3,0 միլիոնի (1 գ հողում): Այդ հողերի մշակումը թե՛ ազոտորակտերների և թե՛ լորձնային բակտերիաների քանակը զգալիորեն մեծացնում է:

Թույլ հզորությամբ, խճային, կավով և՛ հարուստ, և՛ աղքատ մուգ գորշ հողերում թեև տարրական ազոտի ասիմիլացումն ինտենսիվ է ընթանում, սակայն ազոտորակտերների և լորձնային բակտերիաների քանակը, կիսաանապատային, խճոտ, ավազակավային գորշ հողերի ազոտորակտերիաների և լորձնային բակտերիաների քանակի համեմատությամբ, շատ փոքր է: Այստեղ, ըստ երևույթի, տարրական ազոտի ասիմիլացման համար այնքան կարևոր չէ ազոտորակտերների քանակը, որքան

Առանձին հոդատիպերի տարրական ազդուի ստիմիլացիոն ունակութիւնը

Հոդի բնույթը	Բուսական ծածկոցը	Հումուսը	Ինքնա- նուր ազդու նիւթի տարրա- կազմը		I գր շարա- րի քայրա- յումից կազ- ված ազդուը
			գրամներով	միլիգրամներով	
Ֆլուսանապատային, խճոտ, ավազակալային զորը հողեր	Կիսաանա- պատային	0,5—1,8	0,7	0,13	10,36
Ուռզմամբ կուլտուրակա- նացած զորը հողեր	խաղող-պլու- զատու ծա- ւեր	2,5—3,8	0,17	0,34	17,50
Թեթիկ, կավաավազային, գետաբեր զորը հողեր	խոնավասեր լայնատերեկ բանջարա- նոցային	2,1—3,11	0,14	0,28	13,02
Թույլ հզորութիւնով կա- վային, խճոտ, զորը հողեր	Կիսաանա- պատային	1,9—2,8	0,1	0,18	24,35
Թույլ հզորութիւնով, խճոտ, ավազակալային, ոռոգմամբ կուլտուրա- կանացած շաղանակա- զույն հողեր	հացահատի- կային կուլ- տուրաներ	2,5—3,73	0,15	0,32	27,73
Թույլ հզորութիւնով, խճոտ, կավաավազային, մշակմամբ կուլտուրակա- նացած շաղանակա- զույն հողեր	հացահատիկա- յին կուլտու- րաներ	2,34—4,0	0,15	0,34	12,04
Հզոր, խճոտ, կավաավա- զային, լեռնա-անտառա- յին հողեր	անտառային (կաղնուտ և տարատեսակ թփուտներ)	3,53—5,59	0,19	0,40	11,34
Հզոր, կավային, մշակ- մամբ կուլտուրականա- ցած սեահողեր	հացահատի- կային կուլ- տուրաներ	4,06—6,22	0,25	0,63	1,54
Հզոր, սեահողանման, լեռ- նա-մարգագետնային հողեր	մարգագետ- նային բու- սականու- թիւն	5,5—7,4	0,32	0,79	—
Հզոր, խճոտ, ավազակալա- յին, լեռնա-անտառային զարընազույն հողեր	անտառային բուսականու- թիւնով, մեծ մասամբ կաղնի	5,8—9,1	0,36	0,68	—
Թույլ հզորութիւնով, խճոտ, կավաավազային, լեռնա-մարգագետնա- յին հողեր	արլայան բու- սականու- թիւն	6,7—12	0,41	0,82	—

նրանց տարրական ազոտի ասիմիլացման ակտիվությունը: Ինչպես երևում է աղյուսակ 2-ում բերված թվական տվյալներից, հաճախ հողի մեջ ազոտորակտերների քանակը թեպետ և փոքր է լինում, բայց այդ հողերի տարրական ազոտի ասիմիլացումն ավելի ին-

Աղյուսակ 2  
Առանձին հողատեսակների ազոտորակտերների և լրձնային բաղադրանքների քանակը

Հողերն ու թրքերը	1 գ մասնի- տի քայքայ- ումից կապ- ված ազոտը մգ-ներով	Ազոտորակ- տերների քա- նակը 100 մգ հողում*	Ռազդերակ- տերների քա- նակը 1 գ հողում մի- լիոններով
Կիսաանապատային, խճոտ, ավա- զակավային, գորշ հողեր	10,36	++++	3,0
Ոռոգմամբ կուլտուրականացած գորշ հողեր	17,50	++++	4,0
Թեթև, կավաավազային, դեռաբեր գորշ հողեր	13,02	+++	0,7
Թույլ հզորությամբ, կավային, խճոտ, գորշ հողեր	24,35	+++	0,52
Թույլ հզորությամբ խճոտ, ավազա- կավային, ոռոգմամբ կուլտուրա- կանացած շագանակագույն հողեր	27,73	+++	0,72
Թույլ հզորությամբ, խճոտ, կավա- ավազային մշակմամբ կուլտուրա- կանացած շագանակագույն հողեր	12,04	—	1,20
Հզոր, խճոտ, կավաավազային, լեռնա-անտառային հողեր	11,34	+	0,60
Հզոր, կավային, մշակմամբ կուլ- տուրականացած սևահողեր	1,54	++++	1,44
Հզոր, սևահողանման, լեռնա-մար- զագետնային հողեր	—	—	1,20
Հզոր, խճոտ, ավազակավային լեռնա-անտառային, դարչնագույն հողեր	—	—	2,00
Թույլ հզորությամբ, խճոտ, կավա- ավազային, լեռնա-մարզագետ- նային հողեր	—	—	—

\* +++++ նշաններն արտահայտում են Պետրիի թափ ազարային շերտի վրա ցանված հողի մասնիկների ազոտորակտերների 100%<sub>0</sub> անը:

+++ նույնը 75%<sub>0</sub> անի դեպքում

++ > 50%<sub>0</sub> > >

+ > 25%<sub>0</sub> > >

— ազոտորակտերների անի բացակայություն

տե՛նսիվ է ընթանում: Եվ դեռ ավելին՝ որոշ հողեր կարող են նույնիսկ ազոտորակտերներ չսպարունակել, բայց տարրական ազոտն ասիմիլացնել: Այդ պետք է բացատրել նրանով, որ հողի տարրական ազոտի ասիմիլացման ունակութձամբ օժտված են ոչ միայն ազոտորակտերները, այլև հողում բնակվող տարբեր ֆիզիոլոգիական խմբերի միկրոօրգանիզմներ: Այդ տեսակետից ուշագրութձան արժանի են լորձնային բակտերիաները: Այսպես, օրինակ՝ ալյուսակ Զ-ում բերված տվյալներից երևում է, որ եթե բավարար հզորութձամբ, խճոտ, կավասավազային շագանակագույն հողերում ազոտորակտերներ չեն հանդիպում, բայց դրանց փոխարեն նրանց մեջ լորձնային բակտերիաներն զգալի թիվ են կազմում: Այդ հողերում 1 գ մասնիտի քայքայումից նույնպես կապվում է 12,04 մգ տարրական ազոտ: Դա արգեն ինքնին ասպացույց է, որ այդ հողերում ազոտի ասիմիլացման պրոցեսին մասնակցում են գլխավորապես լորձնային բակտերիաները, ինչպես նաև այլ ֆիզիոլոգիական խմբերի միկրոօրգանիզմները:

Ալյուսակ Զ-ի տվյալներից երևում է նաև, որ կան առանձին հողատեսակներ, օրինակ, հզոր շերտ ունեցող լեռնա-տափաստանային, օրգանական նյութերով հարուստ լեռնային սևահողեր, որոնք թեև մեծ քանակութձամբ ազոտորակտերներ և լորձնային բակտերիաներ են պարունակում, բայց թե հիշյալ բակտերիաները և թե հողը տարրական ազոտն ասիմիլացնելու շատ թույլ ունակութձուն են ցուցաբերում: Շատ հավանական է, որ քանի դեռ այդ հողերում կան զգալի քանակութձամբ ազոտային միացութձյուններ, նրանցում բնակվող թե ազոտորակտերները և թե այլ միկրոօրգանիզմներն ավելի հեշտութձամբ յուրացնելով հողում գտնվող արգեն պատրաստի ազոտային նյութերը, այլևս կարիք չեն զգում տարրական ազոտը յուրացնելու:

Բարձր լեռնային, օրգանական նյութերով հարուստ սևահողերը ոչ միայն տարրական ազոտը չեն ասիմիլացնում և ազոտորակտերներ չեն պարունակում, այլև լորձնային բակտերիաներ շատ քիչ ունեն կամ բոլորովին չունեն: Այսպիսով, միանգամայն վստահ կարող ենք ասել, որ հողի՝ տարրական ազոտի ասիմիլացման ունակութձյան և ազոտորակտերների քանակի ու վերջիններիս ակտիվութձյան համար վճռական նշանակութձուն ունեն, մի կողմից՝ հողի ֆիզիկո-քիմիական հատկութձյունները, մյուս կողմից՝ նրա ընդհանուր բիոլոգիական ակտիվութձյունը: Առանձին հողատեսակների՝ տարրական ազոտի ասիմիլաց-

ման ունակության համար, ինչպես ցույց են տալիս մեր դիտողությունները, կարևոր նշանակություն ունի նաև տվյալ հոդային պայմաններում աճող բուսական ծածկոցի կազմը:

Այս ուղղությամբ մեր ձեռնարկած ուսումնասիրությունների տվյալներն ամփոփված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

Բուսական ծածկոցի ազդեցությունը հողի տարրական ազոտի ասիմիլացման ունակության վրա (1 գ մաննիտի քայքայումից կապված ազոտը մզ-ներով)

Բուսական ծածկոցի հիմնական կազմը	Հողի բնույթը				
	կիսամանապատային, խճոտ, ալաղահատային գորշահող	թեթև կավալավազային, դետարեր դորշ հող	միջին և ծանր միջին	կոշտ և անկոշտ	բուսական ասիմիլացման
Հացահատիկային կուլտուրա	16,82	10,82	7,2	2,50	—
Ծխախոտ	—	14,66	11,26	1,31	—
Կարտոֆիլ	—	18,54	15,2	5,6	—
Թիթեռնածաղկավորներ (կորնդան կամ առվույտ)	16,54	4,66	1,36	—	—
Պաղոց և պտղատու այգիներ	17,50	12,46	8,46	—	—
Չոր տափաստանային բույսեր	6,86	—	3,52	—	—
Անտառ-տափաստանային բույսեր	—	8,54	6,31	—	—
Անտառային բույսեր	—	—	11,34	—	—
Մարգագետն. >	—	—	—	1,31	—
Ալպյան >	—	—	—	—	—

Ինչպես տեսնում ենք այս աղյուսակում բերված թվական տվյալներից, երբ առանձին հողատեսակներում մշակում կամ աճում են հացահատիկային կուլտուրաներ, պտղատու բույսեր, ծխախոտ և կարտոֆիլ, հողի՝ տարրական ազոտի ասիմիլացման ունակությունը համեմատաբար բարձրանում է, իսկ թիթեռնածաղկավոր բույսերով, չոր տափաստանային, անտառա-թփուտային, անտառա-ծառատեսակ, մարգագետնային, ալպյան բուսականությամբ զրաղված լինելու դեպքում, հողերի՝ տարրական

ազոտի ասիմիլացման պրոցեսը շատ թույլ է ընթանում կամ բոլորովին տեղի չի ունենում: Այսպես, օրինակ՝ կիսաանապատային, խճոտ, թույլ կալային, գորշ հողերում հացահատիկներ և խաղող ու պտղատու ծառեր աճելու դեպքում, եթե 1 գ մաննիտի քայքայումից կապվում է մոտ 16—18 մգ տարրական ազոտ, ապա նույն հողերում թիթեոնածաղկավոր և շոք տափաստանային բույսեր աճելու դեպքում 1 գ մաննիտի քայքայումից հազիվ կապվում է 6—7 մգ տարրական ազոտ: Այդ նույն օրինակաբանությունը նկատվում է նաև թեթև, ավաղակալային, բերվածքային բնույթի և կավաավաղային շագանակագույն հողերում, չնայած վերջին տիպի, մանավանդ շագանակագույն հողերում տարրական ազոտի ասիմիլացումը, կիսաանապատային գորշ հողերի համեմատությամբ, թույլ է ընթանում: Ինչպես վերը նշեցինք, այդ գործում, բացի բուսական ծածկուցից, մեծ դեր է խաղում նաև հենց հողի ազոտային նյութերի պաշարը:

Այդուհանդի տվյալներից պարզ երևում է նաև, որ ազոտի ասիմիլացման պրոցեսի վրա առանձնապես բարերար ազդեցություն են գործում կարտոֆիլը և, մասամբ, խաղողի վաղն ու պտղատու ծառերը: Այդ, անկասկած, պետք է բացատրել, ինչպես մենք մի քանի այլ աշխատություններով (1949, 1951) արդեն ապացուցել ենք, նախ՝ հողի սիստեմատիկ մշակություն և վերը հիշված բույսերի արմատային սիստեմից արտադրվող անազոտ, անխաճնային նյութերի քանակի ազդեցությունը:

Եթե հասկավոր բույսերը, կարտոֆիլը, ծխախոտը կիսաանապատային, գորշ, թեթև ավաղակալային, բերվածքային բնույթի, մուգ-գորշ և կավաավաղային շագանակագույն հողերում աճելու դեպքում՝ բարերար ազդեցություն են թողնում տարրական ազոտի ասիմիլացման վրա, ապա այդ նույն բույսերը լեռնային տափաստանային սեահողերում և բարձր լեռնային մարգագետնային հողերում տարրական ազոտի ասիմիլացման վրա ոչ մի ազդեցություն չեն թողնում: Այս հանգամանքը մի անգամ ևս ապացուցում է, որ հողի ազոտային նյութերի քանակը տարրական ազոտի ասիմիլացման գործում վճռական նշանակություն է ստանում:

Վերը բերված տվյալներից կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Ազոտորակտերները՝ տարրական ազոտի ասիմիլացման

ունակությունը բարձր է այն հողերում, որոնք քիչ քանակությամբ ազոտային միացություններ են պարունակում:

2. Հողում տարրական ազոտի ասիմիլացման պրոցեսին մեծապես նպաստում են հասկավոր բույսերը, կարտոֆիլը, խաղողը, պտղատու ծառերը, մասամբ էլ ծխախոտը, Թիթեռնածաղկավոր բույսերը, չնայած իրենց պալարաբակտերիաներով նպաստում են հողի ազոտային նյութերի քանակական ավելացմանը, բայց հողում ազատ ապրող ազոտորակտերների և ընդհանրապես հողի տարրական ազոտի ասիմիլացման վրա այնքան էլ նպաստավոր ազդեցություն չեն գործում: Այդ լավ է արտահայտվում հատկապես շագանակագույն հողերում և սևահողերում:

3. Ազոտ պարունակող օրգանական նյութերով հարուստ սևավահողերում և բարձր լեռնային մարդադետնային հողերում տարրական ազոտի ասիմիլացում տեղի չի ունենում, ինչպես նաև նրանց մեջ ազոտորակտերներ խստառ բացակայում են, անկախ այդ հողերի բնական ու կուլտուրական բուսական ծածկոցից:

#### Գ Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Յ Ո Ւ Ն

Հ. Կ. Փանոսյան, Ծ. Ս. Թառայան և Ռ. Շ. Հարությունյան, 1949. Ազոտի ասիմիլացիայի վրա հացազգիների արմատային սիսեմի ազդեցության հարցի շուրջը. Հայկական ՍՍՌ ԳԱ Միկրոբիոլոգիական ժողովածու, պրակ 4, էջ 3:

Հ. Կ. Փանոսյան, Ա. Ի. Մինասյան, Ծ. Ս. Թառայան և Ռ. Շ. Հարությունյան, 1951. Ցանքաշրջանառության մեջ մտնող միջանի բույսերի և հողի միկրոբային բնակչության փոխազդեցության շուրջը. Հայկական ՍՍՌ ԳԱ Միկրոբիոլոգիական ժողովածու, պրակ 6, էջ 3:

А. К. Паносян, Р. Ш. Арутюнян, Ш. С. Тараян

### О способности ассимиляции атмосферного азота различными типами почв

#### Резюме

В разложении органических соединений и круговороте веществ, вообще, превращение азотистых соединений имеет большое значение. Органические вещества в почве минера-

лизуются множеством микроорганизмов, следовательно последние способствуют питанию и росту растений. Так как растворимые азотистые соединения в большом количестве поглощаются растениями, микроорганизмами, а частично вымываются, большинство почв нуждается в азотистых соединениях, недостаток которых восполняется внесением минеральных и органических удобрений. С точки зрения пополнения азотного фонда почвы огромное значение имеют микроорганизмы, связывающие атмосферный азот—азотобактеры.

Разностороннему изучению этой бактерии посвящены многочисленные труды. Однако не выяснен еще вопрос интенсивности ассимиляции азота различными типами почв, содержащими неодинаковые по количеству и качеству азотистые соединения. В этой связи при изучении биологических особенностей почв Зангезура нами исследовалась азотассимилирующая способность разных типов почв.

Разные типы почв, как сказано, содержат неодинаковые по количеству и качеству азотистые соединения. Это обстоятельство находится в зависимости от географического расположения почв, климатических условий и особенностей растительного покрова.

Различное содержание азотистых веществ в отдельных типах почв Зангезура отражается на интенсивности ассимиляции азота этими почвами и количестве азотобактера в них.

За последние несколько лет нашими исследованиями доказано, что количество азотобактера и интенсивность ассимиляции выше в почвах, бедных усвояемыми азотистыми веществами, а в почвах, богатых этими веществами, ассимиляция протекает очень медленно или совершенно отсутствует. В подтверждение сказанного приводится таблица 1.

Данные таблицы показывают, что темнобурые почвы при разложении 1 г сахара связывают от 24 до 28 мг атмосферного азота, в то время как в черноземе при тех же условиях связывается 1--2 мг азота. Черноземы с луговой, альпийской растительностью совершенно не связывают газообразный азот.

В деле связывания атмосферного азота безусловно большое значение имеет количество азотистых веществ в почве. Приведенные в первой таблице данные о количестве азотистых веществ показывают также, что почвы, содержащие большое количество гумуса и др. азотистых соединений, не связывают атмосферный азот, и наоборот, бедные азотистыми веществами почвы интенсивны в усвоении молекулярного азота.

На ассимилирующую способность почвы безусловно влияет окультуренность почвы. Так, если почва не обрабатывалась и была покрыта степной растительностью, интенсивность ассимиляции доходила до 10,36 мг на 1 г использованного сахара. При обработке же этой почвы связывалось 17,5 мг азота.

Разные типы почв отличаются количеством азотобактера и радиобактера, данные об их количествах приведены в таблице 2.

По данным таблицы можно отметить, что полупустынные бурые почвы богаты как азотобактером, так и радиобактером. Обработка данных почв увеличивает количество указанных групп микроорганизмов.

В темнотурных почвах, несмотря на интенсивность ассимиляции молекулярного азота, количество азотобактера и радиобактера значительно меньше. Повидимому, в этом случае имеет значение активность самих бактерий в процессе ассимиляции азота.

В некоторых типах почв, как, например, в каштановой почве, представленной в таблице 2, азотобактер совершенно отсутствует, но почва связывает азот атмосферы. Из той же таблицы видно, что в этой почве много радиобактера, повидимому, последняя группа и др. микроорганизмы являются также фиксаторами азота. Если же почва содержит большое количество как азотобактера, так и радиобактера, а интенсивность ассимиляции этой почвы незначительна (в данном случае горно-степная почва, богатая органическими азотистыми соединениями), то надо полагать, что упомянутые микробы используют связанный в почве азот, поэтому ассимиляция газообразного азота здесь слаба.

В горных темных черноземах, богатых органическими веществами, как количество азотфиксирующих организмов, так и ассимиляция азота или незначительные или вовсе отсутствуют.

Таким образом, количество азотфиксаторов и интенсивность ассимиляции азота зависят как от физико-химического состояния, так и от общей биологической активности почв.

Ассимилирующая способность различных типов почв, как показали наши исследования, зависит также от растительного покрова данной почвы (таблица 3). Приведенные в таблице данные показывают, что картофель, виноград, плодовые насаждения и др. культуры усиливают интенсивность ассимиляции азота, что объясняется как систематической обработкой почв, так и корневыми выделениями этих растений. Однако те же культуры в условиях черноземной почвы благотворного влияния не оказывают, чем снова подтверждается влияние связанных азотистых веществ на ассимилирующую способность почв. Если же растительный покров составляют бобовые растения, луговая, альпийская растительность и лесокустарники, то ассимиляция азота или отсутствует, или незначительна.

### В ы в о д ы

1. Интенсивность ассимиляции азотобактера высока в почвах, бедных азотистыми веществами.

2. Интенсивности ассимиляции азота в почве способствуют злаковые культуры, картофель, виноград, плодовые насаждения, отчасти табак. Бобовые растения, хотя сами способствуют увеличению азотистых веществ в почве, но на свободно живущие азотассимилирующие организмы благотворного влияния не оказывают. Это особенно заметно в каштановых почвах и черноземах.

3. Богатые органическими и азотистыми веществами черноземы и высокогорные темные черноземы не ассимилируют газообразный азот и не содержат азотассимилирующих микроорганизмов вообще, независимо от растительного покрова.